ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> հուլիսի 2025թ. N ՄՈ/652-Ա

ք. Արմավիր

«ԱՐՄԱՎԻՐԻ Վ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գևորգ Առաքելյանի 2025 թվականի հուլիսի 7-ի դիմումը.

ո ր ո շ ու մ   ե մ՝

1. «Արմավիրի Վ.Բախշյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գևորգ Առաքելյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գևորգ Առաքելյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արմավիրի Վ.Բախշյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի Վ.Բախշյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Լուիզա Գևորգյանին:
3. «Արմավիրի Վ.Բախշյանի անվան Հ.2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Լուիզա Գևորգյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 15-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գևորգ Առաքելյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 18-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-07-08 10:11:45 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա" ՄԵԽԱԿՅԱՆ